

# ՏԵՍԵՍԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

## ՀՐՎԱՆԴԻ ԱՊԱԶՈՒՅԱՆ

ՀՊՏՀ տնտեսագիտության  
տեսության ամբիոնի վարիչ,  
տնտեսագիտության դոկտոր,  
պրոֆեսոր

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՆԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Ֆինանսական անկայունության պատճառներից են փողի գործառույթների մեջ տեղի ունեցող շեղումները: Ինչպես հայտնի է, փողը ձևավորվել է տնտեսական օրինաչափությունների արդյունքում և իր գործառույթներով պետք է նպաստի փոխանակային ու փոխադարձ պարտքային հարաբերությունների արդյունավետ իրականացնանք, ռեսուրսների, հատկապես ժամանակի խնայողությանը, գործարքային (տրանսակցիոն) ծախսերի կրատմանը, տնտեսական կապերի խորացնանք ու ընդլայնանք: Դրա հետագա էվոլյուցիան և բանկային ինստիտուտի առաջացումն ու կատարելազործումը իրական եեղաշքում էին տնտեսության կարգավորման և արդյունավետության բարձրացնան առումով: Մակայն կերպավոխիման ընթացքում փողը աստիճանաբար ձեռք է բերել նոր դրսևումներ, որոնք բացասաբար են անդրադարձել տնտեսության կայուն զարգացնան վրա: Այսինքն՝ տարրեր տեսությունների կողմից ներկայացվող փողի «առեղծվածային» հատկությունները՝ հետադարձ կապի սկզբունքով, դարձել են տնտեսական խզումների, ռեսուրսների ոչ ռացիոնալ օգտագործման և բաշխման պատճառներ: Փորձ ենք հակիրծ անդրադարձակ մի շարք հեղինակների նուեցումներին:

Կ. Մարքսի կարծիքով՝ փողի առաջացել է տնտեսական զարգացնան որոշակի փուլում և հետագա զարգացնան ընթացքում պետք է վերանա: Նա անդրադարձել է փողի միջոցով փոխանակության իրականացնան հակասական կողմերին, որոնց պատճառով ժամանակի և տարածության մեջ կարող է առաջանալ անհանապատասխանություն բարիքների իրացնան առումով: Փողի միջոցով բարիքների փոխանակությունը (Բ-Փ-Բ) բաղկացած է երկու փուլից՝ վաճառք (Բ-Փ), գնում (Փ-Բ), որոնք կարող են իրար շհամապատասխանել տարրեր պատճառներով: Այսպես՝ բարիքը վաճառվել է, սակայն դրա սեփականատերմ իրեն անհրաժեշտ բարիքը կարող է գնել որոշակի ժամանակաշրջանից հետո կամ նույնիսկ չգնել, ինչը շրբայական ռեակցիայի սկզբունքով ազդում է մյուս բարիքների իրացնան վրա՝ իր բացասական հետևանքներով: Աստիճանաբար մեծանում է տնտեսավարող սուրյեկտների միջև փոխադարձ կախվածության աստիճանը, որը

շուկայական հարաբերությունների մակերեսին դրսնորվում է «փողային կախվածության» միջոցով՝ ստեղծելով փողային ֆետիշիզմ: Այդ հանգամանքն ազդում է մարդկանց գործունեության բնույթի վրա, ինչն արտահայտվում է հարստությունը փողի ձևով ունենալու բուռն ցանկության միջոցով: Սա փոխում է փողի շրջանառության բնույթը, որն ազդում է փոխանակային հարաբերությունների արդյունավետության վրա: Աստիճանաբար փոխում է մարդկանց վարքագիծը, որը պայմանավորված է փողի միջոցով այլ գործառնությունների իրականացմանք: Սա առաջ է բերում որոշակի խվածություն տնտեսական ոլորտների միջև:

Այսպիսով՝ ըստ Մարքսի, փողի միջոցով բարիքների իրացման կամ փոխանակության ընթացքում առաջանում են որոշակի խզվածություններ, որոնք կարող են դառնալ տնտեսական տատանումների պատճառ:

Թ. Վերենը ստեղծեց *փողային մշակույթի տեսությունը*: Նրա կարծիքով՝ փողի միջոցով դրսնորվում են մարդու «ցուցադրական վատնողականության», «գիշատչական» հոգեբանական հատկությունները, որոնք էական ազդեցություն ունեն տնտեսական սուբյեկտի ռացիոնալ վարքագիծի վրա: «Կուտակման նպատակը մյուսներից վեր բարձրանալը, հասարակության մյուս անդամների նկատմամբ փողային իշխանություն ձեռք բերելն է: Փողային քաղաքակրթության հիմնական սկզբունքը ցուցադրական վատնողականությունն է: Իդեալական փողային մարդը նման է իդեալական հանցագործի: Մուտքը դեպի պորտարույժ դասակարգ բացվում է փողային կարողությունների դրսնորմամբ, ինչը նշանակում է ձեռք բերել ոչ օգտակար աշխատանքի ունակություն: Պետք է ընդունել, որ տնտեսական շահերը ենթարկվում են այդպիսի ոչ տնտեսական գործուների»<sup>1</sup>: Այսպիսով՝ փողը ձեռք է բերել այլ գործառույթներ, որոնք ազդում են ռեսուրսների օգտագործման արդյունավետության վրա, և տնտեսական տատանումները դառնում են անխուսափելի:

Զ. Քեյնսը փողի բնույթը բացարեց իրացվելիության (լիկվիդայնության) հայտնի (տրանսակցիոն, նախազգուշական և սպեկուլյատիվ) շարժառիթներով: Նրանց ուղղորդման առումով էական է հոգեբանական գործոնի դերը: Այդ գործոնը անկանխատեսելի է և կառուցված է հուզական (էնոցիոնալ) վարքագիծի վրա, հետևաբար՝ անհամաշափորեն ազդելով տրանսակցիոն, նախազգուշական և սպեկուլյատիվ շարժառիթների վրա՝ փոխում է ակտիվների արդյունավետ փաթեթային (պորտֆելային) բաշխվածությունը: Այս հանգամանքն իր հերթին ազդում է ռեսուրսների օգտագործման արդյունավետության վրա, որի պատճառով տնտեսական տատանումները անխուսափելի են: Քացի այդ, Քեյնսը հանգեց այն եզրակացության, որ արժեքի մեծության որոշման առումով առկա է չափման միավորի ընտրության խնդիրը: Դա հատկապես վերաբերում է գործառութային տարրեր նշանակություն ունեցող բարիքների միջև ռացիոնալ արժեթաքային համամասնությունների սահմանամարդ և տարրեր ժամանակաշրջաններում գների համարմանը: Նա գրում է. «Հասարակության կողմից ստեղծվող բարիքների և ծառայությունների ամբողջությունը տարասեռ համալիր է, որը,

<sup>1</sup> Տե՛ս Վեճլեն Տ., Թеория праздного класса. М., 1984, էջ 80, 231, 238:

խիստ ասած, չի կարող լինել չափելի»<sup>2</sup>: Սա նշանակում է՝ փողի միջոցով արդյունքների արժեքների համադրումը չի կարող ճիշտ արտահայտել դրանց քանակական համամասնությունը: Ինչպես հայտնի է, կարևոր մակրոտնտեսական ցուցանիշ է ՀՆԱ մակարդակը: Բայց ինչպե՞ս կարելի է համադրել, օրինակ՝ գիտական միտքը ՀՆԱ-ի մեջ մտնող մյուս բարիքների հետ. դրանց գործառնական նշանակությունը և դերակատարությունը միանգամայն տարրեր են: Սակայն բոլոր բարիքները գնահատվում են միևնույն արժեչափով (փողով): Այսինքն՝ փողը, որպես չափման միավոր, կատարյալ չէ, իետևապես՝ դրա միջոցով տարրեր բնույթի և նշանակության արդյունքների արժեքների համադրումը բերի է, ուստի խաթարվում է փողի՝ որպես արժեքի չափման միջոցի գործառույթը:

Փողի էլորյան բացահայտման առումով զգակի ներդրում ունի սեմիոտիկայի տեսությունը<sup>3</sup>: Եթե գրավոր կամ բանավոր խոսքը գաղափարներ և մտքեր է փոխանցում, ապա փողի օգնությամբ մարդիկ շուկայական փոխանակության շրջանակներում փոխադարձ գործողություն են իրականացնում: Գները (բարիքի՝ փողով արտահայտված արժեքները) կարգավորում են տնտեսական միջնորդների հնարավոր փոխգործակցությունը շուկայում: Փողի հաղորդակցային գործառույթներից է անհատների միջև վստահության ստեղծումը, որը շուկայական մեծ ցանցերի առաջացման հիմք է դառնում: Փողը առաջացել է ոչ թե ռացիոնալ պլանավորման արդյունքում, այլ ինքնարերարար ծագած հասարակական ինստիտուտ է: Փողը խորհրդանշում է վստահություն: **Փողի՝ որպես վստահության խորհրդանշիչի** միջոցով հաղթահարվում է բարտերային փոխանակության սահմանափակությունը: Փոխանակային հարաբերությունը զարգացնելու և փոխադարձ վստահության մթնոլորտ ստեղծելու համար, Հյումի կարծիքով, անհրաժեշտ է ձևավորել նեխանիզմ: Նա ենթադրում էր, որ խնդրի լուծումը համաձայնության ձեռքբերման երաշխիքի ստեղծումն է, եթե խորհրդանշիչը (փողը) դառնում է յուրատեսակ փատարություն: Փողի կարևորագույն գործառույթը անհատների միջև վստահության առաջացումն է, որը կայունացնում է ռիսկի տատանումները: Այդ վստահությունը և բարյական վարքագիծը ձևավորվում են համապատասխան ինստիտուցիոնալ միջավայրի առկայության պայմաններում, որտեղ էական է պետության դերակատարությունը: Այստեղ փողը դառնում է ոչ թե կամայական, այլ ստիպողական հարաբերությունների կրող: Փողային հարաբերությունները ձևավորում են նոր մշակույթ, փոխում են սոցիալական հարաբերությունների բնույթը, մեծացնում միմյանց նկատմամբ կախվածության աստիճանը, ազդում մարդկանց հոգեբանության վրա՝ կապված խնայողության, հարստության արժեքում, մաներելու հնարավորությունների ապահովման, Քեյնսի խոսքով՝ անկախության ձեռքբերման, իշխանության հաստատման հետ: Մարդկանց վարքագծում փողի միջոցով դրսնորվում են այնպիսի հատկանիշներ, որոնք

<sup>2</sup> **Кейнс Дж.**, Общая теория занятости, процента и денег. М., 2002, с. 40.

<sup>3</sup> Սեմիոտիկայի տեսության համաձայն՝ երևույթի իմաստը կարելի է վերլուծել նշանային համակարգի միջոցով: Մարդիկ միմյանց հաղորդում են մտքեր, և ձևավորվում է միասնական փորձ՝ օգտագործելով ազդանշաններն ու խորհրդանշանները կյանքի տարրեր բնագավառներում:

իրենց բնույթով տնտեսական չեն, քայց ազդում են տնտեսական համակարգի կայունության վրա:

Վերը նշված դիտարկումների արդյունքում հանգում ենք այն եզրակացության, որ փողի հնատիտուտի կերպափոխումները, որոնք ի հայտ են գալիս դրա նոր հատկությունների և դերակատարությունների ձևավորմամբ, տնտեսական միջնորդների ոչ ռացիոնալ վարքագծի պատճառներից են, որի հետևանքով տնտեսական տատանումները դառնում են անխուսափելի: Այդ ոչ ռացիոնալ վարքագիծը դրսերպում է հետևյալ կերպ:

1) Ազդում է բարիքների իրացման կամ սպառնան մակարդակի վրա, որի պատճառով առաջանում են խզվածություններ արտադրության տարբեր փուլերի միջև: Չէ՞ որ փողի հիմնական դերը բարիքների փոխանակությունը կամ շրջանառությունն ապահովելու է: Տնտեսական գործունեության որևէ փուլում իրացման խզումը շղթայական ռեակցիայի սկզբունքով տարրածվում է բոլոր ոլորտների վրա, որին հետևում են տնտեսական անկումը և պարտքային ճգնաժամը: Փաստորեն, խաթարվում է **փողի՝ որպես շրջանառության միջոցի** գործառույթը:

2) Ազդում է խնայողության մակարդակի վրա: Խնայողությունը կատարվում է ոչ ռացիոնալ շարժառիթներից ելնելով, որի պատճառով խաթարվում է ռեսուրսների ռացիոնալ օգտագործման սկզբունքը, այսինքն՝ **փողի՝ որպես կուտակման միջոցի** գործառույթը:

3) Ազդում է ներդրումների մակարդակի վրա: Ցանկացած ռեսուրսի, այդ թվում՝ կապիտալի շարժը տեղի է ունենում փողի ձևով: Սակայն վերը նշված ոչ ռացիոնալ վարքագծի պատճառով տնտեսավարող սուբյեկտները շահագրգոված չեն իրենց փողերը ծախսել ներդրումների ուղղությամբ, որովհետև նրանց «գայթակորում» են այլ շարժառիթներ:

4) Ազդում է սպառում-խնայողություն-ներդրում փոխարարերության արդյունավետության վրա, որը մակրոտնտեսական ցնցումների հիմնական պատճառներից է դառնում:

5) Ազդում է տնտեսավարող սուբյեկտների փոխադարձ վստահության վրա, ինչը խեղաքյուրում է փողի՝ որպես վստահության խորիքանիշի դերը: Փաստորեն, խեղաքյուրվում է **փողի՝ որպես վճարման միջոցի** գործառույթը:

Վերոշարադրյալից պարզ է դառնում, որ փողի գործառույթների խաթարումը կարող է դառնալ տնտեսական տատանումների պատճառ, որի հիմքում դրա անկանխատեսելի դրսերումներն են՝ երբեմն դժվար գնահատելի:

Ֆինանսական շուկան կառուցված է փողի և արժեթղթերի առք ու վաճառքի հիմքի վրա: Թեև արժեթղթերի շուկան էական նշանակություն ունի կապիտալի շարժի առումով, սակայն ֆինանսական շուկայի առանցքը փողի շուկան է: Արժեթղթերի շուկայի գործունեությունը պայմանավորված է փողի շուկայի, այսինքն՝ փողի առաջարկի և պահանջարկի վարքագծի վրա ազդող գործուներով: Ֆինանսական շուկայում գործում են համապատասխան տնտեսական միջնորդներ, որոնք անհրաժեշտ գործարքների արդյունքում ձեռք են բերում որոշակի եկամուտ: Այսինքն՝ գործ ունենք յուրատեսակ բարիքների (փողի և արժեթղթերի տարբեր տեսակների) առք ու

վաճառքի հետ: Ինչպես է կարգավորվում այդ շուկան: Փողի շուկան զուտ կամ մաքուր մենաշնորհային է, իսկ արժեքորերի շուկան (որոշ բացառությամբ)՝ ընդհակառակը:

Ինչպես հայտնի է, տնտեսության արդյունավետ գործունեության նպատակով առաջարկվում է երկու մողել՝ ազատական (լիբերալ) և սոցիալ-շուկայական: Ազատական մողելի հիմքում Ա. Սմիթի «անտեսանելի ձեռքի» սկզբունքն է, համաձայն որի՝ ռեսուրսների արդյունավետ օգտագործման ու բաշխման միակ մեխանիզմը տնտեսավարող սուբյեկտների միջև կատարյալ մրցակցային հարաբերությունների ձևակորումն է: Դա հնարավորություն է տալիս գործարքային ծախսերը հասցնել նվազագույնի, որը հնարավորի սահմաններում ապահովում է Պարետո արդյունավետություն, և գործում է Ըոռության բերեմքը: *Սոցիալ-շուկայական տեսության* համաձայն՝ շուկայական ինքնակարգավորմանը բնորոշ են բազմաթիվ թերություններ, որոնց հաղթահարման միակ ճանապարհը տնտեսության պետական կարգավորումն է:

Ֆինանսական շուկայի կարգավորման առումով մոտեցումները տարբեր են: Տարածված տեսակետն այն է, որ փողի շուկան օրինաշափորեն պետք է լինի մենաշնորհային: Այդ կարգավիճակի անհրաժեշտությունը բացատրվում է հետևյալ հանգամանքներով. 1) միասնական վճարամիջոցի կամ դրամական միավորի բողարկման՝ պետության (Կենտրոնական բանկի) բացառիկ իրավունքի կիրառման անհրաժեշտությամբ, որը, իբրև թե, չի կարող ունենալ այլընտրանք, 2) ուկու և արժույթի պահուստների պահպանման պետական հսկողության անհրաժեշտությամբ, 3) առևտրային բանկերի պահուստային ֆոնդերի պահպանման և կարգավորման անհրաժեշտությամբ, 4) տնտեսության դրամավարկային կարգավորման կարևորությամբ: Այսինքն՝ փողի առաջարկը բացառապես ոչ ճկուն է, որի պայմաններում լուրջ խնդիր է առաջանաւ «արդյունավետ» տոկոսադրույթի ձևակորման առումով՝ դառնալով փողի իրական գնային ազդանշանը: Կենտրոնական բանկը կարող է փողի էմիսիայի, ինչպես նաև, այսպես կոչված, իր գործիքների (գործարքներ բաց շուկայում, հաշվարկային դրույթափի և բանկային պահուստների կարգավորում) միջոցով մեծացնել կամ փոքրացնել փողի առաջարկը, հետևապես՝ տոկոսադրույթի և ինֆլյացիայի մակարդակը, որը ամբողջությամբ փոխում է տնտեսական սուբյեկտների վարքագիծը: Փասորեն, շրջանառության համար անհրաժեշտ փողի բանակությունը որոշվում է մեկ՝ պետական կարգավիճակ ունեցող հաստատության կողմից, հետևապես՝ դրա գինը մենաշնորհային է: Միշտ էլ մենաշնորհային (մոնոպոլ) գները խեղաքյուրում են բարիքների և ռեսուրսների փոխանակության իրական արժեքային համամասնությունը: Այս հանգամանքը ստիպել է Լ. Միզեսին եզրակացնելու, որ «շրջանառության մեջ փողի քանակության ավելացումը կամ նվազեցումը պետք է հանգեցնեն բարիքների գների համամասնական փոփոխության, սակայն ժամանակակից տնտեսագիտությունը հստակորեն և անհերքելիորեն ապացուցել է այդ հիմնավորման սխալականությունը: Փորձերը՝ ավելացնելու շրջանառության մեջ փողի քանակությունը, որպեսզի կարգավորվեն պետական ծախսերը և տոկոսի նորման, փլուզում են դրամաշրջանառության ոլորտը և

խաթարում տնտեսական ամբողջ հաշվարկը»<sup>4</sup>: Միզեսի կարծիքով՝ տոկոսադրույթի այդպիսի արհեստական տատանումները կարող են շփոթության մեջ գցել տնտեսական սուբյեկտներին և դառնալ ոչ ճիշտ որոշումների պատճառ: Այս համատեքստում, կապված արդյունավետ արտաքին տնտեսական կապերի իրագործման հետ, զգալի է Կենտրոնական բանկի կողմից արտադրույթի կուրսի կարգավորման դերը: Դա հատկապես իր ազդեցությունն է ունենում արտահանման և ներմուծման հարաբերակցության վրա:

Վերոշարադրյալից պարզ է դառնում, որ ֆինանսական, հետևապես և տնտեսական անկայունության հիմքում առկա է նաև փողի շուկայի մեջանորհային կարգավիճակը:

Ֆինանսական անկայունությունը պայմանավորված է նաև արժեքդրերի շուկայի վարքագծով:

Այդ առումով հետաքրքիր է Քեյնսի մոտեցումը: Նրա կարծիքով՝ տնտեսական համակարգում անկայունության առաջացման պատճառներից են. 1) ամբողջական կապիտալ ներդրումների մեջ բաժնետոմսերի տեսակարար կշռի մեծացումը, որի դեպքում խզվում է կապը կապիտալի սեփականատերերի և արտադրության կազմակերպման միջև, 2) շահույթի տատանումները, որոնք երբեմն խոչընդոտ են դառնում երկարաժամկետ ներդրումների համար՝ կապված տնտեսության տեխնոլոգիական վերազինման հետ, 3) տնտեսական իրավիճակների պայմանական գնահատումները, որոնք արդյունք են զանգվածային (ամբոխային) հոգեբանության, 4) մասնագետների գործունեությունը, որոնք ուղղորդում են կապիտալի շարժը, սակայն ոչ այն ուղղությամբ, որ անհրաժեշտ է, 5) սպեկուլյատիվ շուկայի դերի ընդլայնումը կապիտալի շարժի առումով<sup>5</sup>: Փաստորեն, Քեյնսի կարծիքով, արժեքդրերի շուկայի վարդագիծը դառնում է տնտեսական տատանումների պատճառ:

Ըստ Զ. Սորոսի՝ համաշխարհային կապիտալիզմի համակարգի քննադատությունը կարելի է խմբավորել երկու հիմնական ուղղություններով: Առաջինը վերաբերում է շուկայական մեխանիզմի թերություններին: Այստեղ նա նախնառաջ կարևորում է ֆինանսական շուկաներ ներքափանցած անկայունությունը: Մյուսը վերաբերում է պետության վարած քաղաքականության ձախողությունը և բարոյական արժեքների խեղաքյուրմանը ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակներում<sup>6</sup>: Նրա կարծիքով՝ շուկայական համակարգը, ինչպես այլ մարդկային կազմավորում, արատավոր է իր եռթյամբ: Սարդիկ կարող են ֆինանսական շուկաներում հարստության, իսկ քաղաքականության մեջ հզորության հասնել՝ առաջնորդվելով կեղծ տեսություններով<sup>7</sup>: Ավելին՝ հաջողության հասնելու հավանականությունը մեծանում է, եթե այդ ամենը ներկայացվում է գիտական դիմակի ներքո<sup>8</sup>: Սարդիկ ձգտում են փողի և ոչնչից չեն խորշում հանուն

<sup>4</sup> **Мизес Л.**, Человеческая деятельность: трактат по экономической теории. Челябинск, 2005, с 55, 211.

<sup>5</sup> **Տե՛ս Կեյնս Ջ.к.**, նշվ. աշխ., էջ 146-150:

<sup>6</sup> **Տե՛ս Զ. Սորոս**, Համաշխարհային կապիտալիզմի ճնշաժամը, Եր., 2000, էջ 23-24, 152:

<sup>7</sup> **Տե՛ս նույն տեղը**, էջ 259:

<sup>8</sup> **Տե՛ս նույն տեղը**, էջ 74:

փողի, իսկ փողը իշխանություն է, որը կարող է դառնալ ինքնանպատակ<sup>9</sup>: Չափազանցություն չի լինի, եթե ասենք, որ փողն այսօր, առավել քան երեկ, կառավարում է մարդկանց կյանքը<sup>10</sup>: Փողի կայունության պահպանան ուղիներ որոնելիս կենտրոնական բանկերը բացառապես փողային ցուցանիշների վրա շեն հիմնվում, հաշվի են առնում գործոնների լայն շրջանակ՝ ներառյալ շուկաների իռացիոնալ ազատությունը<sup>11</sup>: Եթե կապիտալը տրվում է բանկային վարկի ձևով, կարող է հարուցել սնանկացումներ ու բանկային ճգնաժամ, եթե արժեքորթեր են, կարող են պատճառ դառնալ արժեքորթերի շուկայի անկան: Ֆինանսական շուկաների մասին մեր ներկա պատկերացումները հիմնված են կեղծ տեսության վրա<sup>12</sup>: Ֆինանսական շուկաները անկայուն են և դեկավարման ու կարգավորման կարիք ունեն<sup>13</sup>: Ֆինանսական շուկաները ոչ թե անքարո են, այլ առհասարակ զորք են բարոյականությունից<sup>14</sup>: Սորոսի կարծիքով՝ դրամական արժեքները բռնազարել են ճշմարիտ արժեքների դերը և գերիշխում են այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են քաղաքականությունը, կրթությունը, արվեստը և անգամ միջանձնային հարաբերությունները<sup>15</sup>:

Եթե փորձենք ընդհանրացնել Սորոսի վերոնշյալ գնահատականները ֆինանսական շուկայի վերաբերյալ, ապա կիամոզվենք, որ դրանք Վերլենի և Քեյնսի մոտեցումների յուրահատուկ համադրությունն (սինթեզ) են: Այսինքն՝ ֆինանսական շուկայի անկայունությունը պայմանավորված է նաև ոչ տնտեսական գործոններով, որոնք նույնպես դառնում են տնտեսական տատանումների պատճառ:

Ֆինանսական անկայունության հիմնական պատճառներից են:

1) «Ֆինանսական պղպջակների» ձևավորումը, որը կապված է իռացիոնալ լավաստեսական (օպտիմիստական) վարքագծի հետ: Այստեղ գործում են «Էյֆորիայի» և «ֆանտազիայի» էֆեկտները՝ որպես մտածողության ձև, ինչն ունի հոգեբանական բնույթ և հուզական դրսորում, և արդյունքում որոշումներն իռացիոնալ են՝ կտրված իրական գործընթացներից: Այդ պայմաններում ֆիրման բողարկում է չափահովված պարտքային պարտավորություններ, որոնք ուղեկցվում են ֆինանսական շուկայի տատանումներով, ապա հաջորդում են կտրուկ անկումը, խուճապը, և «պղպջակները պայթում են»: Բնականաբար, սկսվում է պարտքային ճգնաժամը, որին հետևում է տնտեսական անկումը:

2) Տեղեկատվության անհամաշափությունը (ասիմետրիկություն), որը խեղաքյուրում է սպասումների ուղղունակությունը, և առաջին պլան են մղվում իռացիոնալ շարժառիթները:

3) Ո-իսկերի գնահատման դժվարությունները ոչ միայն անորոշության աստիճանի մեծացման, այլև տնտեսական միջնորդների հոգեբանական և ենթագիտակցական դրսորումների առումով, որոնք կանխատեսելի չեն:

<sup>9</sup> Տե՛ս նոյյն տեղը, էջ 166:

<sup>10</sup> Տե՛ս նոյյն տեղը, էջ 169:

<sup>11</sup> Տե՛ս նոյյն տեղը, էջ 171:

<sup>12</sup> Տե՛ս նոյյն տեղը, էջ 259:

<sup>13</sup> Տե՛ս նոյյն տեղը, էջ 263:

<sup>14</sup> Տե՛ս նոյյն տեղը, էջ 266:

<sup>15</sup> Տե՛ս նոյյն տեղը, էջ 278:

Ապացուցվում է, որ մարդիկ որոշումներ ընդունում են ոչ թե հաշվարկված ռացիոնալ, այլ ինտուիտիվ կանխատեսումներից ելնելով, որի ռացիոնալ կամ ոչ ռացիոնալ լինելու հանգամանքը նախապես հնարավոր չէ գնահատել: Այսպիսի վարքագիծը ավելի ընդգծված ձևով դրսերվում է ֆինանսական շուկայում: Սա նշանակում է՝ գործ ունենք իռացիոնալ վարքագիծի հետ, որի պայմաններում դիսկի գնահատումը և ռացիոնալ գործունեության ուղղորդումը գորեթե անհնարին են դառնուում:

4) Իներցիայի օրենքը, ինչը սպեկուլյատիվ շուկայում ապահովում է «ձնագնդի» կամ «դիմուգավրի» էֆեկտ՝ առաջացնելով անհամապատասխանություն տնտեսության իրական և փինանսական հատվածների միջև, դառնալով տնտեսական անկման պատճառ:

Վերոհիշյալ գործուների ազդեցության հետևանքով ֆինանսական շուկան վերածվել է ինքնարակ համակարգի, կորցրել իրական հատվածը սպասարկելու իր հիմնական դերը և դարձել տնտեսական անկումների ու ճգնաժամների հիմնական պատճառներից մեկը:

Ֆինանսական շուկայի կարգավորման առումով, ըստ Ֆ. Հայեկի, կարևոր է իրաժարվել փողի առաջարկի մենաշնորհից: Փողի շուկայի մենաշնորհային կարգավիճակը վերացնելու նպատակով Հայեկն առաջ է քաշում «մասնավոր փողերի» տեսությունը<sup>16</sup>: Նա առաջարկում է փողի թողարկումն ապահովել մի քանի բանկերի միջոցով, այսինքն՝ ստեղծել մրցակցող բանկեր՝ իրենց վճարամիջոցներով, որոնք կունենան ապահովածություն ունկով կամ արտարժույթով: Թողարկող բանկի համար առանցքային է վճարամիջոցի գնողունակության ապահովումը: Դրա արժեգրկումը կարող է դառնալ թողարկող բանկի նկատմամբ վստահության կորստի պատճառ: Թողարկող բանկերի միջև մրցակցությունը կատարվի: 1) որոշումներն ընդունել կատարյալ մրցակցային շուկային բնորոշ սահմանային ծախսի և սահմանային հասույթի հավասարության հիմքի վրա, 2) սահմանափակել փողի քանակությունը, որովհետև դրա լրացուցիչ թողարկումը կապված է լրացուցիչ ծախսի և կորստի հետ: Քանի որ թողարկողը պարտավորվում է վճարամիջոցը կամ փողը մարել պահուատային ապրանքով՝ ունկով կամ կայուն արտարժույթով, դա սահմանափակում է նրա հնարավորությունները՝ շրջանառության մեջ թողարկելու օպտիմալ ծավալներից ավելի փող: Այս ճանապարհով հնարավոր է վերացնել փողի շուկայի մենաշնորհային կարգավիճակը և չեզոքացնել ինֆլյացիոն գործընթացները:

Հայեկի առաջարկությունը շատ գայթակղիչ է, սակայն որոշ վերլուծաբանների կարծիքով՝ մասնավոր փողերի տեսության սկզբունքների կիրառմանը կարող են խոչընդոտել հետևյալ հանգամանքները<sup>17</sup>: 1) այստեղ, բնականաբար, գործելու է մասշտաբի էֆեկտը, և փողի թողարկումն աստիճանաբար կենտրոնանա փորրաբիւ բանկերի ձեռքում, որի հետևանքով մրցակցությունը կունենա խմբատիրային (օլիգոպոլ) բնույթ, 2) կարող է ստեղծվել ինստիտուցիոնալ ծուլակ, 3) ինֆլյացիայի ցածր մակարդակը զարգացած երկրներում, 4) արմատավորված ավանդույթները, 5) մի քանի

<sup>16</sup> Տե՛ս Խայեկ Փ., Частные деньги, М., 1996:

<sup>17</sup> Տե՛ս Կոպտիօնենկո Դ., „Частные деньги“ Хайека: 30 лет спустя. М., „Вопросы экономики“, 2006, N 6, էջ 74-80:

բանկի կողմից բողարկված վճարամիջոցներից յուրաքանչյուրը կարող է ունենալ գործառնության նեղ շրջանակ, որի պատճառով այդ համակարգը չի կարող լինել մրցակցային: Սակայն սա չի նշանակում, թե Կենտրոնական բանկի մենաշնորհային կարգավիճակի հետ կապված խնդիրը վերանում է, և, այս առումով, Հայեկի հարցադրումները լուծում են պահանջում:

### **ОВСЕП АГАДЖАНЯН**

*Заведующий кафедрой „Теории  
экономики“ АГЭУ, доктор  
экономических наук, профессор*

***К вопросу о финансовой нестабильности.***— В статье рассмотрен феномен денег как основа финансовой нестабильности. В том контексте автор рассматривает другие причины финансовой нестабильности. Одним из путей преодоления финансовой нестабильности является ликвидация монополии Центрального банка. Эта теория разработана Ф. Хайеком в книге „Частные деньги”.

### **HOVSEP AGHADJANYAN**

*Head of the Chair „Theory of Economics“  
at ASUE, Doctor in Economics, professor*

***On the Issue of Financial Instability.***- The phenomenon of money is observed as a basis of financial instability in the given paper. According to this implication the author observes other reasons of financial instability. One of the ways for overcoming financial instability is the liquidation of the monopoly of the Central Bank. That theory is developed by F. Hayek in the work „The private money”.